
ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԵԼԻՍԱՎԵՏՊՈԼԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ
(XIX դ. երկրորդ կես)

ԳՈՀԱՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Արևելյան Հայաստանում բամբակագործությամբ, բացի Երևանի նահանգից, նշանավոր էր նաև Ելիսավետպոլը (Գանձակ): 1836 թ. Ղարաբաղում տարեկան ցանում էին 550 ֆունտ (1 գրվանքա = 409,5 գրամի) բամբակի սերմ, որից ստացվում էր 3200 փուլթ մաքուր (սերմագտված) բամբակ և 1100 ֆունտ սերմահատիկ¹: Ընդհանուր առմամբ, Անդրկովկասում բամբակի արտադրությունն ու առևտուրը սկսում էին զարգանալ հատկապես 1855 թվականից, այսինքն՝ այն ժամանակներից, երբ «Ամերիկայից ներմուծվող այդ արդյունքի մեկ փթի վրա, մոտավորապես 45 կոպ. ոսկով, մաքս դրվեց, որը և ունեցավ բարերար հետևանք՝ Անդրկովկասի բամբակի արդյունահանման համար: Երկրորդ և ավելի մեծ զարկը մեզանում եղավ 1860-ական թվականներին Հյուսիսային Ամերիկայի միացյալ նահանգների ներքին (քաղաքացիական – Ա. Գ.) պատերազմին, որի պատճառով բամբակ ստանալը Ամերիկայից դառավ անկարելի. Եվրոպայում և Ռուսիայում բամբակի գները բարձրացան մի քանի պատիկը... հետո գներն իջան, բայց գործը մնաց»²: Նշված հանգամանքների բերումով, թե՛ ներսի, թե՛ արտաքին շուկաներում բամբակի (հումքի) գները բարձրացան: Եթե նախկինում բամբակի մեկ փուլթ Թիֆլիսում արժեր 3 ռ. 50 կոպ., 1865 թ. և հետո այն հասավ 15 ռուբլու, իսկ եվրոպական շուկաներում 18-ի³: Մինչ այդ, հատկապես արևմտյան եվրոպական երկրներ, բամբակի արտահանումն աննշան էր. օրինակ՝ 1855 թ. մեկ ամսվա ընթացքում Կովկաս էին ներմուծվել 103.904 ռ. 6 կոպ. արժողությամբ բամբակյա գործվածքներ և 17.280 ռուբլու էլ հումք⁴, իսկ բամբակեղենի արտահանում չէր եղել: Հատկապես դարավերջին, տեղի էին ունենում բամբակագործության տարածման ու մասնագիտացման լուրջ տեղաշարժեր: Ելիսավետպոլի նահանգում այն մշակվում էր Արեշի, Ջևանշիրի, Շուշիի, Ջանգեզուրի և Ելիսավետպոլի գավառներում, որոնցից նշանավոր էր Արեշը, ուր ստացվում էր նահանգի բամբակի հումքի 1/3 – 3/4-ը: Մինչև 1887 թ. այդ զբաղմունքը նահանգում կրել է չափավոր, մասնակի բնույթ, իսկ 1890-ից այն վերածվել է մասնագիտացված որոշակի մշակույթի, որի բերքատվությունը տարեցտարի աճում և վերածվում էր «...գյուղացուն ամենա-

¹ Обзорение российских владений за Кавказом, ч. III, СПб., 1836, с. 284.

² «Մուրճ», Թիֆլիս, 1891, № 4, էջ 426-427:

³ «Մշակ», Թիֆլիս, 1876, № 3:

⁴ «Кавказ», Тифлис, 1855, № 48, с. 195.

կանխիկ փող տվող»⁵ մասնաճյուղի: 1897 թ. բամբակի բերքի ընդհանուր քանակը 153.000, իսկ 1898-ին 257.000 փութ էր⁶, ինչն աննախադեպ էր և հուսադրող, քանզի տեղի բամբակագործները կարող էին մրցել Երևանի գավառի (նույնանուն նահանգում) իրենց գործընկերների հետ. այնտեղ, դեռևս 1889 թ. բամբակի հումքի միայն արտահանումը կազմել էր 600.000 փութ⁷, որը (XIX դ. ընթացքում) անհասանելի մնաց էլիսավետապոլցիների համար:

Բամբակի բերքի սերմագատումը կատարվում էր տեղական ձեռքի սարքերով, որոնցից տիպական էր չագրիխը. այն կազմված էր փայտե գլանակից ու երկաթյա ձողիկից, որոնք տեղադրված էին միմյանցից 0,5 սմ հեռավորության վրա. դրանք շարժվում-պտտվում էին հակառակ ուղղություններով ու բամբակը մաքրում սերմերից: Սարքը գործարկվում էր մարդու աշխատուժով. մեկ ձեռքով պտտեցնում էր գլանը, մյուսով՝ սարքի վրա լցնում հումքը. ընթացքում բամբակն անջատվում էր սերմնահատիկներից: Առավել արդյունավետ էր, երբ նշված սարքի (չագրիխի) վրա միաժամանակ աշխատում էին երկու բանվոր. մեկ օրվա ընթացքում նրանք ստանում էին 20–30 ֆունտ մաքրված բամբակ, որն արտադրողականության բարձր ցուցանիշ էր⁸: Չագրիխով սերմագտումն ուներ նաև մեկ այլ առավելություն. մշակված բամբակը ստացվում էր մեծ՝ ամբողջական հատվածներով, որը բարձր որակի հատկանիշներից էր և արտաքին շուկաներում թանկ էր գնահատվում: Արտադրական բարձր ցուցանիշների պատճառով էլ չագրիխը նախընտրելի էր Արևելքի շատ երկրներում և մեծ տարածում ուներ⁹: Մակայն Կովկասի (այդ թվում նաև Ելիսավետապոլի) նահանգներում 1860–1870-ական թվականներից գործածության մեջ մտան նոր՝ քոթոն-ջին կոչված, ամերիկյան բամբակագտիչ մեքենաները. դրանք այստեղ գործարկվում էին կենդանու (ձի, էջ, եգ, ցուլ) աշխատուժով, իսկ ավելի ուշ՝ ջրաշրջիկ (հիդրավլիկ) շարժիչների միջոցով, որոնք օժտված էին երկուական ձիաուժ հզորությամբ¹⁰:

Ելիսավետապոլի նահանգում քոթոն-ջինների քանակը 31-ն էր, որից 8-ը՝ Արեշի, 4-ը՝ Ջևանջիրի, 3-ը՝ Ջանգեզուրի և 2-ական էլ՝ Շուշիի ու Ելիսավետապոլի գավառներում: Դրանցով, մեկ աշխատանքային օրում, գտվում էր 45–60-ական փութ բամբակ. անվիճելի էր արտադրողականության բարձր մակարդակը, որով և շահագրգռված ֆիրմաների ջանքերով էլ այդ սարքերն ու մեքենաները ներմուծվում էին արտերկրից: Եվրոպայից ներմուծված քոթոն-ջինն արժեք 180–200 ռուբլի, իսկ ամերիկյանը՝ 450¹¹: Այդ գները մատչելի չէին բամբակագործ գյուղացիությանը, և դրանք, մեծ մասամբ, պատկանում էին տեղաբնակ գնորդ վաճառուներին և օտարերկրյա ֆիրմաներին, որոնք էլ ցածր գներով

⁵ «Մուրճ», 1898, № 2-3, էջ 255:

⁶ Е. Н а у м е н к о. Елисаветпольская губерния. Тифлис, 1903, с. 366.

⁷ «Մուրճ», 1890, № 6, էջ 903:

⁸ Акты, собранные Кавказской археологической комиссией, т. X. Тифлис, 1880, с. 165-166.

⁹ С т. Г у л и ш а м б а р о в. Обзор заводов и фабрик Закавказского края. Тифлис, 1894, с. 281.

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Кавказское сельское хозяйство, Тифлис, 1895, с. 1472.

գնում էին գյուղացու բամբակի բերքը, սերմագտում ու բարձր գներով վերավաճառում արտաքին շուկաներում: Բամբակի բերքի այն մասը, որը տնօրինում էր հումքատեր գյուղացին (սեփական կարիքների համար), գտում էին վարձավճարով: 35 փութ հումքը վերամշակելու դիմաց գյուղացին փոխհատուցում էր մեկ փութ բամբակով կամ որոշ չափի դրամով: Երբեմն այդ կատարվում էր ձրի. օրինակ՝ վերոհիշյալ Պոզնանի մանուֆակտուրային ընկերությանը պատկանող շարժական սերմագտիչ գործարանը շրջում էր նահանգի համապատասխան վայրերն ու առանց վարձավճարի գտում գյուղացիների բամբակի բերքը, պայմանով, որ արտադրանքն ամբողջությամբ արտահանվեր Ռուսաստան¹²:

1860–1880-ական թվականներին Կովկասում բամբակը փոխադրվում, արտահանվում էր մեծածավալ պարկերով (բարդան), որոնք շատ անհարմար էին, իսկ կորուստը՝ մեծ (2–3%)։ «...յոթ փթանոց բարդանից պակասում էր 5–7 ֆունտ հումք: Թաթար ուղեկցողներն ու սայլապաններն իջնանատներում՝ խանութպաններին վաճառում էին հումքը, իսկ փոխարենը բարդանները լցնում էին քար»¹³ և անպիտան տարբեր իրեր: Բացի դրանից, այդ հսկայածավալ բեռների փոխադրավարձն անհամեմատ թանկ էր ստացվում (65 փութ ցորենի, մետաղի և այլնի փոխարեն տեղավորվում էր 30–40 փութ բամբակի մեծածավալ պարկերը)¹⁴, կային այլ անհարմարություններ նա:

Դարավերջին Անդրկովկասում ի հայտ եկան բամբակամամլիչ սարքեր՝ ձեռքի և պտուտակավոր, որոնք ունեին պարզ կառուցվածք ու շատ գործածական էին գյուղերում, իսկ հիդրավլիկ մամլիչները՝ խոշոր ձեռնարկություններում, ուր ստացվում էին 12 փթանոց հակեր՝ յուրաքանչյուրը 20–22 խորանարդ ֆունտ (1 ֆունտը՝ 30,5 սմ) ծավալով, որոնց արտահանումն այլ երկրներ (Ռուսաստան, Լեհաստան և այլն) շատ հարմար ու շահավետ էր¹⁵: Ելիսավեստպոլի նահանգում մամլիչների թիվը 12-ն էր. 10-ը՝ Ադրաշի (Արեշի գավառ), 1-ը՝ Շուշիի և մյուսն էլ Ջևանշիրի գավառներում¹⁶: Կապված մանուֆակտուրային արտադրության զարգացման ու բամբակի հումքի պահանջարկի անընդհատ աճի հետ, Ռուսաստանում գնալով ավելի էր մեծանում Անդրկովկասի (այդ թվում և Ելիսավեստպոլի նահանգի) որակյալ բամբակ-հումքի պահանջարկը: Այդ ուղղությամբ խթանիչ միջոցառումներ էին ձեռնարկում ոչ միայն ռուս գործարարները, այլ նաև պետությունը: Դեռևս 1840-ական թվականներին բամբակագործության զարգացման ուղղությամբ մեծ ջանքեր էր գործադրում Կովկասի փոխարքա Մ. Վորոնցովը: Հետագայում՝ 1884 թ., Մոսկվայի Սավվա-Մորոզովի տեքստիլ գործարանի ղեկավարության նախաձեռնությամբ, բամբակի որակյալ սերմատեսակներ բերվեցին Ամերիկայից ու անհատույց

¹² Е. Н а у м е н к о. Եզվ. աշխ., էջ 363-368:

¹³ Записки Кавказского общества сельского хозяйства, ч. II. Тифлис, 1865, № 1, с. 20-22.

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ С т. Г у л и ш а м б а р о в. Եզվ. աշխ., էջ 283:

¹⁶ Е. Н а у м е н к о. Եզվ. աշխ., էջ 363-368:

բաժանվեց տեղաբնակներին: Անդրկովկաս գործուղվեց գյուղատնտես ուն Սամոյլսկի, որը բամբակագործության առաջավոր գործառույթներն ուսումնասիրել էր Ամերիկայում¹⁷:

Հետագայում Ռուսաստանի պետական ունեցվածքի և ֆինանսների նախարարությունների նախաձեռնությամբ Արեշի ու Ջնանշիրի գավառներում հիմնվեցին բամբակի ցուցադրական ցանքատարածքներ (պլանտացիաներ), որոնցում մշակվում էին ամերիկյան բերքատու բարձրորակ սերմեր, և մշակման բոլոր գործընթացներն այնտեղ կատարվում էին նորագույն մեթոդներով ու շահագրգիռ հոգացությամբ: Դեռևս 1889 թ. այդպիսիք ստեղծվել էին Երևանի նահանգի նույնանուն գավառում, նաև Ելիսավետպոլի, Բաքվի, Թիֆլիսի նահանգներում ու Չաքաթայայի մարզում. նպատակը բամբակագործության գիտական, գործնական հարցերի խորագնին ուսումնասիրությունն էր և ստացված արդյունքների տարածումը՝ համապատասխան վայրերում: Նշված միջոցառումները դրական ազդեցություն ունեցան և շահավետ եղան Ղարաբաղի Տերտեր, Ադդաշ, Կարայազ բնակավայրերում¹⁸:

Անդրկովկասում, այդ թվում նաև Ելիսավետպոլի նահանգում հումքի մի որոշ մաս օգտագործվում էր տեղի տնայնագործ-գյուղացիների կողմից: Ձեռքի սարքով՝ ճախարակով, ստացված բամբակե թելերից հնամենի տեղական դագ-գահի վրա գործում էին կտավ. օրինակ՝ 1886 թ. միայն Չանգեզուրի գավառում կային 131 կտավագործ (տղամարդ)¹⁹: Կտավից կարում էին արխալուղ (արտահագուստ), տաբատ, վերնաշապիկ և այլն: Բամբակյա թելերը, կտավը ներկում էին հիմնականում կապույտ (բոյախաչի) գույնի, իսկ կարպետի թելերը՝ բազմագույն: Ներկելու վարձավճարը կազմում էր մեկ արշինը 20 կոպեկ: Բամբակի թելերից ոլորում կամ գործում էին լամպի պատրույզներ, իսկ մոմագործ տնայնագործները՝ մոմերի միջուկ-թելեր²⁰ և այլն:

Չնայած բնական բարենպաստ պայմաններին՝ նահանգում բամբակի մշակումը սահմանափակ էր. օրինակ, Հադրութ բազմամարդ բնակավայրը, ուր եղած հումքն էլ սպառվում էր տեղում: Անբարենպաստ հանգամանքներին գումարվում էին նաև բերքատվության անհաջող, անբերրի տարիները և այլն. այսպես՝ 1901 թ. Ելիսավետպոլի նահանգի բամբակի բերքի ընդհանուր քանակը կազմել էր 105.000 փութ՝ չգտված²¹: Հետագայում (1905–1907 թթ.) այդ մշակութաբարյսի աճը զգալի էր, և նշված ժամանակում այն (ըստ գավառների) ուներ հետևյալ պատկերը²².

¹⁷ «Մուրճ», 1903, № 10, էջ 175-176:

¹⁸ Труды первого Кавказского съезда сельских хозяев 15–24 ноября 1909 г. в городе Тифлисе. Доклады, Тифлис, 1911, с. 120–122.

¹⁹ Н. Ш и р а к у н и. Зангезурский уезд.— Сборник материалов для описания местностей и племен Кавказа, т. XXXIV, от. I. Тифлис, 1886, с. 104.

²⁰ Е. Н а у м е н к о. Նշվ. աշխ., էջ 368:

²¹ Նույն տեղում, էջ 168:

²² Приложение ко всеподданнейшему отчету о состоянии Елисаветпольской губернии за 1907 г. Елисаветполь, 1908, с. 10.

1. Ելիսավետպոլի գավառ – 480 դեյաստինից ստացվել է 12.300 փութ բամբակ
2. Արեշի – // – 5.747 – // – 53.642 – // –
3. Ջհանշիրի – // – 911 – // – 7.280 – // –
4. Ջանգեզուրի – // – 58 – // – 283 – // –
5. Շուշիի – // – 169 – // – 1.690 – // –
 Ընդամենը՝ – // – 7.365 դեյաստինից՝ – // – 75.195 փութ բամբակ (տեղական ու ամերիկյան տեսակների):

Վերոհիշյալ տվյալները վկայում են, որ Ելիսավետպոլի նահանգում գյուղատնտեսական այդ կարևոր ճյուղը՝ բամբակագործությունը, գնալով արմատանում ու մեծ չափեր էր ընդունում՝ նպաստելով Ռուսաստանի, մասամբ նաև Անդրկովկասի մանուֆակտուրային, գործարանային արտադրության զարգացմանը:

ХЛОПКОВОДСТВО В ЕЛИСАВЕТПОЛЬСКОЙ ГУБЕРНИИ (Вторая половина XIX в.)

ГОАР АРАКЕЛЯН

Р е з ю м е

В Восточной Армении возделыванием хлопка кроме Ереванской губернии была знаменита также Елисаветпольская губерния со своими провинциями Ареш, Джеваншир, Шуша, Зангезур, Елисаветполь (Гандзак). Полученное сырье в основном экспортировалось (особенно в Россию), и со временем спрос на него рос. Наблюдался прогресс в технической переработке сырья, приобретении качественных плодородных семян и в решении других проблем. Начиная с середины века старинное местное оборудование чагрех было заменено оборудованием американского типа коттон-джин (“cotton-jean”) и семяочистителями других типов. К концу века в употребление вошло гидравлическое оборудование для прессовки хлопка, которое облегчало экспорт сырья. Постепенно росла сельскохозяйственная и промышленная значимость этой отрасли в Елисаветпольской губернии, что способствовало развитию фабрично-заводской (ткаческой) промышленности в России, включая Закавказье.